

Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>>

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**<<ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ
ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>**

ՀՈԴՎԱԾ 1. <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի
մասին>> Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի
ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 49-րդ հոդվածում 1-ին մասից հետո
լրացնել 1.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

<<1.1. Պայմանագրային զինծառայողի գեկուցագրի հիման վրա հերթական
արձակուրդին կարող են միացվել նաև <<Հայաստանի Հանրապետության
զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին>>
օրենքի 227-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն զինծառայողին հաշվարկված
հանգստի օրերը՝ որպես սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հերթական
արձակուրդի լրացուցիչ տևողություն:>>:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 61-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասի առաջին նախադասությունում <<ապահովությունը>> բառից
հետո լրացնել <<սահմանվում է ամսական օրացուցային օրերի հաշվարկով
և>> բառերը.

2) 16-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ
խմբագրությամբ.

<<Զինվորական ծառայությունից արձակվող և զինվորական ծառայության
ընթացքում սույն օրենքի 49-րդ հոդվածի 1-ին և 1.1-ին մասերում սահմանված
արձակուրդի չօգտագործված օրեր ունեցող զինծառայողին այդ օրերն
արձակուրդի տեսքով տրամադրելու անհնարինության, ինչպես նաև այդ
արձակուրդի տրամադրումից զինծառայողի հրաժարվելու դեպքերում
զինծառայողին տրվում է հատուցում՝ չօգտագործված արձակուրդի բոլոր
օրերի դիմաց, որի չափը հաշվարկվում է զինծառայողի զբաղեցրած վերջին
պաշտոնի խմբին համապատասխան սահմանված պաշտոնային դրույքաչափը
30-ի բաժանելու և չօգտագործված արձակուրդի օրացուցային օրերի թվով

բազմապատկելու միջոցով:>>:

ՀՈՂՎԱԾ 3. Օրենքի 73-րդ հոդվածի 7-րդ մասում <<առողջության կամ տարիքի կամ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցնելու կապակցությամբ>> բառերը փոխարինել <<երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցած կամ առողջության կամ տարիքի կամ զինվորական ծառայության պաշտոնը քաղաքացիական հատուկ ծառայության կամ քաղաքացիական ծառայության պաշտոնի փոխվելու կապակցությամբ զինվորական հաստիքը կրճատվելու հիմքով>> բառերով:

ՀՈՂՎԱԾ 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:
2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի գործողությունը տարածվում է 2017 թվականի դեկտեմբերի 16-ից ծագած հարաբերությունների վրա:
3. Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն 2017 թվականի դեկտեմբերի 16-ից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը պայմանագրային զինվորական ծառայությունից արձակված և <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց հատուցում չստացած կամ մասնակի ստացած նախկին զինծառայողները կարող են սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից հետո 6-ամսյա ժամկետում դիմել ծառայությունից արձակումն իրականացրած պետական լիազոր մարմին՝ հասանելիք հատուցումը հաշվարկելու նպատակով: Համապատասխան պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանվում է սույն մասի համաձայն վարչարարության իրականացման կարգը:
4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումը, ինչպես նաև սույն օրենքից բխող այլ նորմատիվ իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունները և լրացումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 90 օրացուցային օրվա ընթացքում: